

միջամտութիւն պատերազմի, անկումն Հասարակական Հազարամեայ տան, պատրանքը Վերսայլի դաշնագրին՝ որով իտալիա ոչինչ կը ստանար իր զոհողութեանց փոխարէն:

Քաւուրէն վերջ, որ փոքրիկ Փիլեմոնթէն մեծ պետութեանց կարգն անցուց, Մուսոլինին եղաւ որ իտալիոյ տալ տուաւ իր բնական արժանիքը, փակագին մը նկատելով Ֆրանչէսքոյ Քրիսփիի վարչութիւնը:

Վերսայլի դաշնագրով ազգային կեանքին մէջ առաջ եկած անհաւասարակշռութենէն օգտուեցան անիշխանականք և ընկերակարականները և Միլանի կրկէսին մէջ հսկայ ցոյց մը պատրաստեցին (15-7-1919), որուն դէմ կանգնեցաւ Մուսոլինիի 150 հոգինոց խումբը, Բազմաբուռեանի դեռ զինուորական տարազը կրող ուսանողներով: և ընդգիծագիրներն սկսան խորտակումով մը, որոնք զօրանալ սկսած էին Օրլանտոյի թոյլ վարչութեամբ և Նիթթիի ծայրայեղ ձախակողմեան ընթացքով: Համայնավարութիւնը ծայր տուած էր՝ աղետաբեր գործադուլներով քաղքէնի կեանքին մէջ, և զինուորականութեան մէջ անկարգութեամբ ու լուստներներով պատերազմէն վերադարձող սպայից դէս, սպանութիւններով քաղաքային ժողովներու մէջ:

Բոլոր ողջամիտ տարրերը Խրճաւորներու շուրջը հաւաքուեցան, որոնք որոշ և հատու ծրագրով, բերտ ուժին դէմ՝ գործեցին յանդուգն ձեռնարկներով: Ի հարկին բրտագոյն ոյժ գործածելով, և ուր հարկ էր՝ հասան, ախրեցին ու կանգնեցին ազգային դրօշն ու պատիւը:

Օրլանտոյ, Նիթթի, Ջոլիթի, Ֆաթթա տարուան մը մէջ փոխն ի փոխ իրարու յաջորդեցին՝ խաղաղիկ դարձած ծայրայեղներու սպառնալիքներով՝ որոնք «Աշխատանքի Ղաշակցութիւն» անուան տակ կազմակերպեցին գաղտնի միութիւն մը՝ գործելու պատրաստ: Ասոր հակառակ ձայն տուաւ Մուսոլինի և իր հետեւորդները հետզհետէ քաղքէն և ախրեցին Թորինոյի, Պոլոնիայի, Քրեմոնայի, Սիենայի և Բերուսիայի կայսրաններուն՝ ուղղուելով Հռոմի վրայ: Ֆաթթա պատերազմական պաշարման հրովարտակով խափանել ուղեց յառաջխաղացումը, որուն հակառակեցաւ լուսամիտ Թագաւորը և կանոնաւոր բանակին զուգընթաց կանգնեց յեղափոխականը, և հրահանգ ղրկեց Մուսոլինիին՝ գալ և կազմել նոր նախարարութիւնը (29 Հոկտ.):

Դասակարգային առաջին յեղափոխութիւնն էր Ֆաշիականութիւնը, որ առանց արիւնհեղութեան և արհաւիրքի կը յաղթանակէր, և այս հանգամանքով պատմութեան մէջ առաջին տեղը պիտի գրաւէ: Սահմանադրականօրէն, անոնսապէս, վարչաբար, բարոյապէս, որոշ գաղափարներու և սկզբունքներու վրայ հիմնուած խորհրդարանական նոր ձեւով և ըմբռնումով սկսաւ նա և կը շարունակէ իր վերելքը: 1925 - 28 ստեղծագործութեան շրջանին մէջ, Ֆաշիոն վերածնունդի մեծագոյն շրջաններէն մին կը ներկայացնէ իր տուած աշխատութիւններով: Ուրբայ կը վերաշինէ ազգային օրինագիրքը: Կը հաստատուին նոր օրէնքներ գաղտնի ընկերակցութեանց դէմ, ի մասնաւորի մասնականութեան հակառակ, որ իտալիան ճորտ մը դարձուցած էր օտար տէրութեանց շահերուն: Անպարտաճանաչ, անարժան կամ անկարող պաշտօններու ազատ արձակումը, Պետութեան շահերուն պաշտպանութեան համար մահուան պատիժի հաստատութիւնը, հասարակաց գաղափարին մէջ մտցուց խղճամիտ աշխատութեան և գործունէութեան գաղափարն ու սկզբունքը:

Ներքին վերակազմութեան և յաջողութեանց վրայ եկան արտաքին այնպիսի յաջող դէպքեր, որոնք Ֆաշեան կառավարութեան և Մուսոլինիի ազդեցութեան գիւթական հանգամանք տուին: Եւ ասոնց մէջ մեծագոյնը՝ Լատերանեան դաշնագրերը, որով Վատիկանի և իտալիոյ միջեւ կը կնքուէր հաշտութիւն մը (11 Փետր. 1929), որ Մուսոլինիի փառքին լուսապսակը կը կազմէ:

Շինարարական այնպիսի ձեռնարկներ և գործեր կատարուեցան հատու վճարականութեամբ՝ որոնք ուրիշ Ժամանակներ դասական երկար վիճաբանութեանց և տարիներու կը կարօտէին: Հոս երկու անուններ պէտք է մոռնալ. Ճուրիթի և Չանոյ: Վարժարան՝ սկսեալ տարրականէն մինչեւ համալսարան, նախարարատուններ, ճամբայ, Զրմուղ, Էլեկտրակայան, ուղղութիւններ, ցամքեցում ճահիճներու, մինչեւ իսկ հիմնարկութիւն և շինութիւն նոր քաղաքի, երկրագործութեան նոր մղում ու զարգացում և ամէն ինչ որ անհրաժեշտ պէտք էր ժողովրդեան բարօրութեան համար՝ կանգնուեցան: Նիւթական տարրին իմացականն ու բարոյականը զուգեց, գիտութիւնն ու գեղարուեստը: Հիմնեց իտալիոյ ձեմարանը, քաջալերեց գիտնականներն ու գրականութիւնը. ստեղծեց Պալիլաներու խումբերը որոնք Յառաջապահութեան Ազգային կամաւոր խումբերու կանցնին և այսպէս մանկութենէ մինչեւ երիտասարդութիւն տղան սեփականացուց ազգին և հայրենիքին՝ ապահովելով անոր կրօնական և բարոյական զարգացումը:

Համախոհ կամ հակախոհ, ով որ ալ ըլլայ, երբ այս տասնեակ տարիներու վրայ ակնարկ մը ձգէ, ստիպողաբար պիտի տեսնէ և գնահատէ աշխատութիւն մը որ հսկայ արգիւնք տուած է, առանց եղածը կործանելու աւելցնելով ու վերաշինելով:

Ոչ խօսք այլ գործ: Հուժկու բազումներով դարբնող խելացի պատանին՝ կեանքի ամէն խաւերէ անցնելէ վերջ ահա թէ կնչպէս դարբնեց Նոր իտալիան:

ԲԵՆԵԿԵՐԻՆՈՅ

ՎԻՐԻՊԱԿ. — Նախորդ թիւին «Ռուսիա»-ի տեսութեան բաժինն մէջ, 45 էրես, 18րդ տողը, - գիշրագիրներու բարոյական... - կարգա քաղաքացիներու բարոյական...:

Ա.Զ.ԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ԴԵՊ Ի ՀԱՅԱՍՏԱՆ վերջին մերգաղթը տեղի ունեցաւ տարւոյս սկիզբը. այս առթիւ հոս յիշեմք կարգաւ մախորդներն ալ:

Ա. մերգաղթի կարաւանը, բաղկացած 1911 հոգիէ, մեկնեցաւ Աթէնքէն «Հիօթէոս» շոգեմատով 1931ի Գեկտ. 30ին, մեծամասնութիւնը Յունաստանէն էր. քանի մը հոգի միայն դուրսէն:

Բ. մերգաղթի կարաւանը, բաղկացած 1250 հոգիէ, մեկնեցաւ Աթէնքէն Մոյն «Հիօթէոս» շոգեմատով 1932ի փետր. 22ին, Գրեթէ ամբողջապէս յունական գաղութէն:

Գ. մերգաղթի կարաւանը մեկնեցաւ Սելամիկէն, 1522 գաղթականներով, 1932ի Ապրիլ 24ին. Մեծամասնութիւնը յունական գաղութէն:

Դ. մերգաղթի կարաւանը՝ 1550 գաղթականներով՝ մեկնեցաւ Սելամիկէն «Հիօթէոս» շոգեմատով, 1932ի Յուլիս 1ին. Մեծամասնութիւնը յունական գաղութէն:

Ե. մերգաղթի կարաւանը՝ բաղկացած 1450 հոգիէ, Պուլկարիայէն՝ 987 հոգի, Ֆրամսայէն՝ 97 և մնացեալ 366 հոգին ալ Յունաստանէն. մեկնեցան Սելամիկէն Յունուար 7ին (1933) «Էւէնի Էմփրե-բոս» շոգեմատով, Պուլկարէն ալ մեկնեցան 13 Յունուարին (1933):

Ուրեմ տարւում մ'ըմթացքին մայր հայրենիքն ողջունեցին շուրջ 8000 հայեր. Ներգաղթը որ սկսած էր 1921ին, երբ Միջագետքէն 9000 հոգի ըմբռնուեցաւ Հայաստան, յետոյ Պոլսէն, Յունաստանէն, Պուլկարիայէն և այլն, համագումար 36,000 հոգի. Ներգաղթի լիազօրմ. եղած է ցարդ Դ. Շահվերտեան. Գաղթականները տեղաւորուած են Հայաստանի զամազան քաղաքները. ամոնք որ հայրենակիցներու ձեռքով կառուցուած գիւղեր ունէին՝ հոն գացին, այսպէս Արաբկիլքիք, Սերաստացիք, Խարբերդիք, Թումարգացիք եւն. իրենց հօր աւաններուն մէջ:

Ներգաղթի պատմական գործին մէջ իրենց մեծ բաժինն ունին՝ Հ. Բ. Միլիթիւնը որ ըմբռնաւ րապէս հոգաց ամոնք ճամապարհածախսն ու պէտքերը, ինչպէս Յոյն Կարմիր Խաչը, մեր զամազան գաղթավայրերու մէջ կատարուած համազանգութիւնները, միւս կողմէն ալ շատ սիրալիր եղաւ Խորհրդային Հայաստանի ցոյց տուած ըմբռնութիւնը, գաղթականները տեղաւորելը և ամոնք ամմիջական ըմակարանի, ուսեստի, վառելիքի և այլ պէտքերու հոգածութիւնը:

Այս առթիւ կ'արժէ յիշել որ Խորհրդային Հայաստանի ժողովրդային գործավարական խորհուրդն էր որ զիւրացնելու համար մերգաղթի գործը՝ յաջողցուցած էր իր փափաքին համեմատ Հայաստանի կառավարութեան յամմնել տալ Պաթմի մաւահանգստին վարչութիւնը, ինչպէս մահւ Սովիետ Նոնետրական տորմիդի սպասարկութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. — Հայաստանի խորհրդայնացման 12դ տարեդարձին (հոյ. 29) հիմը դրուած է «Հայկական Խորհրդային Հանրապետարան»-ի. զխաւոր խմբագիրն է Դրաստամատ Միմոնեան. Աշխատակիցներու մէջ նշանակուած է մահւ Տիկին Զ. Նսայեան, Հանրապետարանը պիտի ունենայ շուրջ 15-20 հատոր՝ իւրաքանչիւրը հազար էջ:

Տարւոյս մէջ լոյս պիտի տեսնեն երկու հատոր. Հ. Միմոնեան ալ, յետ աւարտելու Արժատական հսկայ բառարանը ծնոք գարկած է Գաւառաբարբառներու բառարանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ԵՒ ԳԻՒՂԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ «Ճշդելու և ձեւաւորելու» համար յամմաթողով մը կազմուած է, որուն կը մասնակցին Հ. Միմոնեան, Մ. Ղիսիցեան, Յ. Զօրեան, Զ. Կորկոտեան՝ Մ. Արեղեանի մախագահութեամբ:

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆԸ. — Ամցեալ հոյեմբերի վերջերը տօնուած է տասնամեակը Երեւանի «Միտնիկեան» հանրային գրադարանին, որ այժմ ունի շուրջ 800,000 հատոր. զուտ հայկական բաժինը ունի՝ 30,000. Գրադարանը կը բովանդակէ մոյս բաժին Կովկասագիտութեան և Մերձաւոր Արեւելքի գրականութեան. Զեմարկուած է մոր մեծ շէնքի մը կառուցման. Տասնամեակի առթիւ պետութիւնը մուրրած էր 20,000 հատոր գիրք:

ԱՆԻԻ ՊԱՏՄԱԿԱՆ-ՀԱՅԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ. — Դեկտեմբեր 10ին Երեւանի պատմական թանգարանի հմագիտական ճիւղին մէջ բացում կատարուած է Անիի յատուկ բաժինն՝ որ կ'ամփոփէ Ժ-ԺԳ դարերու հմութիւններ, մեծ մասը Մառի կատարած պեղումներէն:

ԵՐԵՎԱՆԻ ՏՐԱՄՈՒՂԻՆ. — Յունուար 12-ին «Մոսկովսկայա տրամուայն է անա սլանում Երեւանի փողոցներով» ողջունում ամբողջ պետութեանը և ժողովրդին որպէս «մի այլ մոտ յաղթանակ սոցիալիստական շինարարութեան»... Ժամը 12-ին կառատորմը դուրս կու գայ «պարկից, ելեքարակամ լամպերի երկնքամբ փմջով... համդիսականները շրջապատում են վակոնները, ցնծութեամբ աղաղակում և ողջունում են... հաւաքուածները լիքը վագոնները երաժշտութեամբ շարժում են առաջ դամբարանէն, համդիսաւորութեամբ... Արդիւնքով».

(«Խորհրդ. Հայաստան»)

ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՍԹԱՏՐԸ (Opera). — Յունուար 20-ին Երեւանի մէջ կատարուեցաւ պաշտօնական բացումը Հայաստանի պետական Նուագաթատրին. Երգեկեան՝ բացման ֆալսէթ մէջ զայն ողջունեց որպէս մոտ յաղթանակ «սոցիալիստական շինարարութեան յաղթական ուղիում մեր կատարած մի շարք մուսիկաների վրայ»... ուր՝ հայ ժողովուրդը իր դարաւոր ցաւի և վշտի երգին տեղ պիտի երգէ «ուրիշ երգեր՝ աշխատանքի և ուրախութեան»... Որպէս երախայրք՝ առաջին անգամ մերկայացուեցաւ Ս. Սպենդիարեանի «Մալմայստ» մուսիկայովը (oprette).

Ամուշաւան Տէր Ղեկունդեան ալ մուսիկայովի վերածելու վրայ է վ. Թոթովեցի «Աստղածորը».

ԿԻՐԱԿԱՆ. — Վերջին տեղեկութեանց համաձայն՝ Հայաստանի մէջ ունիւմ ինքն ընթացողը զարգացող Նշակեցութեան թիւն է 217,000. (1917-27-ին՝ 471,000). Բարձրագոյն ուսումնականներն են 36,000.

ՊԵՏՐՈՒԹԻ ՀԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՂԵՏԸ. — Տարւոյ Յունուար 30-ին, երեկոյեան ժամը 9-ին ատենները ծագած հրդեհ մը մոխրակոյտի վերածեց 500-ի չափ փայտէ տնակները՝ թշուառութեան մատնելով 800-էն աւելի հայ ըմտամիւր, չորս հազար հոգի.

Շատ տխուր է և ցաւալի՝ աղէտին մկարագիւրը. ահագին շփոթութիւնը, վտանգաւոր ճիգերը կրակէն փրկելու կեանքի ամէնէն հարկաւոր առարկաները, տառապանքով շահուած, խնայուած լուսան, բայց խեղճ ժողովրդեան ողբն ու կոծը լսելի եղաւ հայ և օտար շրջանակներու մէջ. Լիքամանեան Համրապետութիւնը, Ֆրանսական մարզպանը փութացին անմիջական հոգն ստանձնել անոնց պատսպարութեան, Դրամական օգնութիւններ հասանձ. Ս. Բահանայապետէն, Հ. Բ. Բ. Միլիթեմէն, Նամսէմեան պաշտօնարանէն, Միլիթեմէնէն, բարձրատիճան հայ և օտար եկեղեցականներէ, ևն. Կազմուած խնամատարութիւնը, մախազահութեամբ ամենապատիւ Տէր Աւետիս Պետրոս Ժ. Կաթողիկոս-Պատրիարքի, բացուած համգանակութիւնները, միմեկմայն թշուառութեան մէջ ցուցուած փոխադարձ այնքան փոխմիտ, սէր և զորով՝ բարոյապէս ալ մեծ մշտնակութիւն ունեցան և տեղական թերթերը ոգեւորութեամբ և արդար պարծանքով կը շեշտէին հայուն աւանդական առաքինութիւնը՝ բարեգործութիւնը, և յետոյ եղբայրական մերձեցումը՝ առանց կրօնական խտրութեանց, իրենց խորհրդածութեանց յանկերգ ընելով «եղբայր եմք... որ մերկաւ էինք զատուած».

Ա.Գ.ԱՍԷՐ

Դառն կսկիծով լսեցինք որ տարւոյս Փետրուար 3-ին տեղի ունեցեր է յեղակարծ մահը

Հ. ՅԱԿՈՒՈՍ Վ. ՏԱՇԵԱՆ

Միաբանին Միւրթ. Ուխտին Վեհեական Հարց

ազնուական և անբասիր կրօնաւորին և արդիւնաշատ անգուգական հայ բանասէրին:

Խորին ցաւակցութիւններ մեր քոյր միաբանութեան իր անդամանելի կորուստին՝ որ ամբողջ ազգին ալ է:

Յաջորդ թիւով պիտի ներկայացնենք ուրուագիծը հանգուցեալ մեծ բանասէրին կեանքին ու գործին:



ԲՈՒՈՐ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՊԱԼԱՏ

Հ. Ս. Խ. Հ. Պետական Գրադարանը այն օրգանն է որ կատարում է Հ. Ս. Խ. Հ. սահմաններում տպագրուած բոլոր հրատարակութիւնների, գրքերի, բրոշիւրների, պարբերականների, թերթերի ևն. բիրտգրաֆիկ մշակումը:

Հ. Ս. Խ. Հ. Պետադարանը միաժամանակ գրադարան է Միջազգային հրատարակութիւնների փոխանակութեամբ, և այդ ճանապարհով աշխատում է հոխացնել Խորհրդային Հայաստանի գրադարանները օտար գրականութեամբ, սպասարկել գիտական, մասնագիտական և Լուսաւորութեան Ֆոնտի աշխատակիցների հայերէն և օտար գրականութեան պահանջներին:

Հ. Ս. Խ. Հ. Պետադարանը իր տրամադրութեան տակ ունի հայերէն և ռուսերէն հին ու նոր հրատարակութիւնների հոխ միջերը, որ կազմում է փոխանակութեան ֆոնտը: Մասնաւորապէս ուշադրաւ է հայագիտական գրականութիւնը, Լեւոնեան ազգագրական Ժողովածու Հայոց պատմութեան, Ղուկասեան մատենադարանի հրատարակութիւններ ևն. ևն. ևն.:

Հ. Ս. Խ. Հ. Պետական Գրադարանը ուղարկում է նաեւ Խորհրդային Հայաստանում և Միութեան սահմաններում լոյս տեսած բոլոր հրատարակութիւնները:

Հ. Ս. Խ. Հ. Գրադարանը խնդրում է բոլոր հայ հեղինակներից, գրաւճառներից և գրասէրներից իրենց հրատարակութիւններից Հական օրինակ ուղարկել Գրադարանին, ամբողջացնելու համար գաղութային գրականութիւնը: Ուղարկուած բոլոր գրքերի փոխարէն պահանջեցէ համապատասխան արժէքով գրականութիւն:

Գաղութային գրական և գիտական լուսաւորութեան աշխատակիցները իրենց գտնուած քաղաքների պետական գրադարաններից լծող պահանջէն մեր գրականութիւնը և նրանց միջն, մասնաւորապէս օտար արեւելագիտական հաստատութիւններին ու գրադարաններին կապ պահանջելու մեղ հետ և պահանջելու մեր հայագիտական և ընթացիկ գրականութիւնը:

Պահանջեցէ Գրադարանի օրգան «Տպագրութեան տարեգիրքը» որ ցոյց է տալիս Խ. Հայաստանում ամբողջ տարւում լոյս տեսած գրքերը, թերթերը, օրագիրները և յօդուածները:

Ամէն գրութիւն և աւարում ուղղել հետեւեալ հասցէին:

Հ. Ս. Խ. Հ. Պետական Գրադարան, Երեւան, Կուլտուրայի տուն:

PALAIS du LIVRE
ERIVAN
U.R.S.S.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԶՈՒԱՐԹՆՈՅ տարեգիրք, Բ - Գ տարի, 1932-1933: Հրատ. Կէտիկ Փաշայի Աղբատանում մարմնոյ (իր հաստատութեան քսանհինգամեակին տոթիւ 1908 - 1933). տպ. «Խալք» - Քէշիշեան. (գեղազարդուած պատկերներով), էջ 177. Կ. Պոլիս:

Քիւրտեան Յարութիւն. — ՀԱՅ ԵՒ ԱՐԱՐ ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ (սկիզբէն մինչեւ Ժ. Գ. դար). (Ուսումն. հայ գեղարուեստի պատմութեան. Գ.) Արատապ. «Անահիտ»էն. մեծագիր, էջ 25: տպ. Թիւրպեան. Փարիզ, 1932:

Ձեռիւրեան Տիգրան. — ՎԱՆՔԸ - ՀԵՐՈՍԸ. Հր. «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 7. էջ 224. Փարիզ, 1933:

Ջարդարեան Վահան. — ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱԼՊՈՄ. Հարիւրամեայ յոբելեան մահուան Յալութիւն ամիսա Պէգճեանի (1834-1933 Յունուար 15). և նշանաւոր ազգայինը: (Յիշատակարան մատենաշար թիւ 8-9). պատկերազարդ, էջ 16. տպ. Յակոբ Փափագեան. Միտան Սուարէս, 1933:

ՕՐԱՅՈՅՑ 1933 (պատի). Հր. Պուլկարիոյ Հայ Թուրիստական «Արծիւ» Միութեան Կեդր. վարչութեան. Փրովոտիս:

Մանանդեան Յակոբ. — ՄԱՆՔ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ. 1) Պետինգերեան քարտէզի Hariza կայարանը. - 2) Նոյնը գերմաներէն համառօտ. - 3) Արաբական արշաւանքները Հայաստանում (ժամանակագրական գիտողութիւններ). Հրատ. Միլգունեան Ֆոնտի. էջ 76. Երեւան, 1932. Գին՝ 2 Բ. 50 Կ.

Проф. Я. А. МАНАДЯН
Заметки о феода и феодальной войне пар-
фии и Арнакидской Армении.
АКАДЕМИЯ НАУК СССР
Тифлис. 1932. Цена 1 руб.

ՄԱՆԱՆԳԵԱՆ ՈՒՍ. Յ.
Տեղեկութիւն Հայաստանի Պարիւշ ու Արշա-
կունի աւատի և աւատական զօրաց մասին:
Հր. Սով. Ռուս. Գիտութեանց Ճեմարանի
Թիֆլիս, 1932. էջ 19. Գին՝ 1 Բ.